

ԱՆԳԵԼԻՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի պետ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Մարդու իրավունքների հայեցակարգն իր արդիական տեսքով ձևավորվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային իրավական ակտերը, միջազգային կազմակերպությունների ստեղծումը, մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմների զարգացումը 20-րդ դարի կարևոր ձեռքբերումներից են:

Հայ հասարակությունը այս ոլորտում ունի իր ինքնատիպ փորձը: Բավականին կարճ ժամանակատահվածում նա ունեցել է երեք հանրապետություն և չորս Սահմանադրություն: Յուրաքանչյուր նոր Սահմանադրություն մարդու իրավունքների գաղափարն արտացոլում էր՝ պայմանավորված երկրում տվյալ պահին գործող իրավիճակին համապատասխան:

Անցումային փուլն անհետևանք չթողեց նաև այս ոլորտը: Այն պայմանավորված էր քաղաքական ճգնաժամերով, սովետական համակարգից ստացած ժառանգությամբ, հայ հասարակության էթնոմշակութային առանձնահատկություններով:

Հիմնարար բառեր: մարդու իրավունք, հումանիզմ, օրենքի գերակայություն, արդար դատարանություն, ազատությունների մեծ խարտիա, իրավունքների բիլլ, մարդու իրավունքների հռչակագիր:

Մարդու իրավունքները, նրա սոցիալական արժանատիքները, նշանակությունը մարդկության պատմական, սոցիալական և մշակութային զարգացման մշտական խնդիրներից են, որոնք ունեն հազարամյակների պատմություն և գտնվել են քաղաքական, իրավական, էթնիկական, կրոնական և փիլիսոփայական ուսմունքների ուշադրության կենտրոնում: Մարդու իրավունքները բարդ, բայց միևնույն ժամանակ մեծ կարևորություն ունեցող երևույթ են: Տարբեր ժամանակաշրջաններում մարդու իրավունքների խնդիրը, անփոփոխ մնալով իրավաբանական ոլորտում, միաժամանակ ձեռք է բերել կամ կրոնական, կամ էթնիկական, կամ փիլիսոփայական կողմնորոշում՝ կախված իշխանության ղեկին գտնվողների սոցիալական դիրքորոշումից:

Պատմությունը վկայում է, որ յուրաքանչյուր սերունդ պետք է պաշտպանի անձի իրավունքները, և որ մարդկությանը դեռևս հայտնի չէ իրավիճակ, երբ չպահանջվեն ջանքեր մարդու իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ: Յուրաքանչյուր սերունդ յուրովի է արձագանքում պատմության հավերժ մարտահրավերներին այնպիսի վեհ արժեքների հետ կապված, ինչ-

պիսիք են ազատությունը և մարդու իրավունքները:

Մարդու իրավունքները սերտորեն կապված են այնպիսի ֆենոմենների հետ, ինչպիսիք են «ազատությունը» և «հավասարությունը»: Շ.Մոնտեսքյուն գրում է. «Ազատությունն իրավունք է տալիս անելու այն ամենը, ինչը թույլատրում են օրենքները: Հասարակության առաջընթացին զուգընթաց ազատությունը դառնում է արդիականության կրոնը, իսկ իրավահավասարությունը՝ մարդկության սրբազան օրենքը»:

Մարդու իրավունքները բնական և անօտարելի են և նրան են պատկանում ի ծնե: Ոչ ոք չի կարող զրկել մարդուն իր բնական իրավունքներից. կյանքի, անձնական անձեռնմխելիության, խղճի, խոսքի, արտահայտվելու ազատության, ընտանեկան կյանքի գաղտնիության և այլ իրավունքներից: Ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց ազատության, հավասարության, արդարության վրա հիմնված մարդու իրավունքների, որոնք իրենց բնույթով համընդհանրական են:

Մարդու իրավունքների կայացումը և զարգացումը թույլ են տալիս բացահայտել քաղաքակրթության տեսակը, նրա մակարդակը, քանի որ մարդու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

և պետության փոխհարաբերություններն այս կամ այն քաղաքակրթության էությունը բնորոշող կարևորագույն հատկանիշ է, իսկ պետությունը՝ որպես իրավական կամ ոչ իրավական: Իրավական, ժողովրդավարական պետությունը ճանաչում է մարդու իրավունքների առաջնությունը՝ այդ իրավունքներով սահմանափակելով նրա իշխանական գործառույթները: Գործում է այն հանրաճանաչ սկզբունքը, ըստ որի՝ մարդն իրավունք ունի անել այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով, իսկ պետական մարմինները՝ միայն այն, ինչը թույլատրված է օրենքով:

Մարդու իրավունքների պաշտպանությունը քննարկելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրա ինստիտուտներին բնորոշ սկզբունքների էությանը: Այդ սկզբունքները գենետիկորեն և գործառույթային առումով կապված են իրավունքի սկզբունքների հետ, այդ իսկ պատճառով արտացոլում են ոչ միայն իրավունքի էության որոշակի ասպեկտներն ու իրավակարգավորման զարգացման ներքին միասնությունը, այլ նաև հասարակական կյանքի բազմազան կողմերի իրավական երևույթները (տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և այլն), ինչպես նաև հասարակության պատմական զարգացման գործընթացում հաստատված իրավական և պետական-քաղաքական դոկտրինալ կարգավորումները:

Որպես առաջին և կարևոր սկզբունք՝ անհրաժեշտ է նշել հումանիզմի սկզբունքը: Հումանիզմի սկզբունքն առանձնանում է խիստ բարոյական և համասոցիալական բովանդակությամբ, ինչից զատ այն միաժամանակ դասվում է համընդհանուր և հիմնական իրավական սկզբունքների շարքին: Մարդու իրավունքների պաշտպանության շրջանակներում հումանիզմի սկզբունքը, շարունակելով իրավաբանական ասպեկտի իր զարգացումը, ստանում է յուրահատուկ բեկում և արտահայտչաձև: Խոսքը գնում է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մասին, որի հիմքում ընկած է մարդասիրության կամ հումանիզմի սկզբունքը, այլ նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասին, որոնք, պաշտպանելով մարդու իրավունքները, ոչ թե հերթական ծառայությունն են մատուցում, այլ հումանիզմի սկզբունքը նաև իրենց գործունեության հիմքի հիմնական տարրերից են համարում:

«Օրենքի գերակայության սկզբունքը» սահ-

մանված է Ֆ. Հայեկի հետազոտություններում՝ որպես արդի դարաշրջանի ձեռքբերում, որը նա բնորոշում է որպես ազատության վահան և դրա ապահովմանն ուղղված իրավական մեխանիզմ: «Թերևս,- սսել է նա,- ոչինչ այնքան պարզ ու հստակ չի վկայում ազատ երկրների կյանքի մասին, ինչն առանձնացնում է նրանց ավտորիտար վարչակազմով երկրներից, ինչքան օրենքի գերկայության գերագույն սկզբունքների պահպանումը, ինչը «սահմանափակում է կառավարության հնարավորություններն անհատների գործունեությանը միջամտելուն՝ բռնություններ կիրառելով նրանց նկատմամբ»:

Ընդհանրապես օրենքի գերակայությունը որպես մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի սկզբունք, օրենք է՝ հիմնված մարդասիրական հիմնարար սկզբունքների խիստ պահպանման վրա, այսինքն՝ այնպիսի իրավական նորմերի, որոնք կոչված են պաշտպանելու նախևառաջ մարդու անբաժանելի իրավունքները և իրավակիրառ գործունեությամբ ապահովելու դրանց իրագործումը:

Որպես մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի կարևոր սկզբունք՝ անհրաժեշտ է առանձնացնել նաև իշխանությունների տարանջատման սկզբունքը: Նման մոտեցումը պատահական չէ և առաջ էր քաշվել դեռևս մարդու իրավունքների ու բնական իրավունքի հիմնադիրների կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանության հաջորդ սկզբունքը արդար դատաբնությունն է: Արդար դատաբնությունը ներկայումս լայն տարածում ստացած իրավաբանական կատեգորիա է: Ընդհանուր առմամբ այն կարելի է բնութագրել որպես իրավական նորմերի վրա հիմնված կոնֆլիկտային իրավիճակների լուծում՝ իրավական հատուկ ինստիտուտի՝ դատարանի միջոցով:

Մարդու իրավունքներն անհատի և պետության փոխհարաբերությունների կարգավորման սկզբունքներ են, նորմեր և կանոններ, որոնք անհատի համար ապահովում են իր հայեցողությամբ գործելու կամ որոշակի բարիք ստանալու հնարավորություն: Մարդու իրավունքների արժեքի զարգացման առումով ՄԱԿ-ը տալիս է մարդու իրավունքների հետևյալ բնորոշումը. «Ընդհանուր գծերով մարդու իրավունքները կարելի է բնորոշել որպես իրավունքներ, որոնք մարդուն հատուկ են ի

բնե, առանց որոնց նա չի կարող գոյություն ունենալ որպես մարդկային էակ»: Մարդկանց խմբի իրավունքները կարող են սահմանափակվել միայն այն դեպքում, եթե դրանց իրականացումը սահմանափակում է ուրիշ անձանց միևնույն կամ համադրելի իրավունքները:

Մարդու իրավունքների հիմնախնդիրն ունի իր նախապատմությունը, և այն կապված է հասարակության, պետության և մարդկային անհատականության զարգացման հետ: Պատմականորեն անձի արժանապատվության և պետական իշխանության նկատմամբ նրա ինքնավար կեցվածքի մասին տեսակետներն առաջին անգամ արտահայտել են Հին Հունաստանի և Հռոմի փիլիսոփաները, պատմաբանները և իրավաբանները: Սակայն, ո՛չ Հին Հունաստանում և ո՛չ էլ Հին Հռոմում հայտնի չէ «մարդու իրավունքներ» հասկացությունը. հարյուրամյակներ էին պետք դրան հասնելու համար:

Միջնադարում ազատությունը շատ սահմանափակ էր, քանի որ ավատատիրական (ֆեոդալական) հասարակությունը համընդհանուր կախվածության հասարակություն էր: Նրանում գերիշխում էր կամայականությունը և ուժի սկզբունքը: Սակայն այդ իսկ ժամանակ Անգլիայում փորձեր էին արվում՝ սահմանափակելու միապետության իրավունքները, միապետի համար կանոններ սահմանելու, որոնց պետք է հետևեն: Միապետի, բարոնների, ասպետների հակամարտությունն ավարտվեց 1215 թվականին՝ «Ազատությունների մեծ խարտիայի» ընդունմամբ:

Ազատությունների մեծ խարտիան (լատիներեն՝ Magna Carta) ամրագրեց Անգլիայի ազնվականության տարած հաղթանակը միապետի նկատմամբ: Նշված փաստաթղթի կարևորությունը կայանում է նրանում, որ դրանում ամրագրված է ազատ մարդու (ավատատիրական իրավահայեցողությանը համապատասխան) անձեռնմխելիության իրավունքը: Այսինքն, մարդը կարող է ձերբակալվել ու բանտարկվել միայն դատարանի օրինական դատավճռի հիման վրա: «Ազատությունների մեծ խարտիան» պատմության մեջ առաջին իրավական ակտն է, որով սկիզբ դրվեց անձի անձեռնմխելիության ժամանակակից ինստիտուտի ձևավորմանը:

Այս բնագավառում հաջորդ կարևոր փաստաթուղթը 1628թ. «Իրավունքների մասին խնդրագիրն» է, որն արդեն վերաբերում է Անգլիայում

բուրժուական կարգերի ձևավորման շրջանին: Դրա հիմնական բովանդակությունն են կազմում սահմանադրական միապետության, առանց խորհրդարանի որոշման ոչ մի հարկ չսահմանելու, ձերբակալությունները՝ միայն օրենքով սահմանված կարգով, ու արտակարգ դատարանների վերացման առաջավոր գաղափարները:

Մարդու իրավունքների ապահովման ճանապարհին հետագա կարևոր քայլը հանդիսացավ 1679թ. Habeas Corpus Act-ը, որն Անգլիայի չգրված սահմանադրության բաղկացուցիչ մասն է: Այն կարելի է անվանել «Մարդու իրավունքների երաշխիքների մասին» ակտ: Դա մարդկային պատմության մեջ առաջին իրավական ակտն է, որում ոչ միայն հռչակված են մարդու իրավունքները, այլև ամրագրված են դրանց ապահովման երաշխիքները: Նշված ակտը վճռորոշ նշանակություն ունեցավ մարդու իրավունքների ժամանակակից միջազգային չափորոշիչների ձևավորման գործում:

1689թ. Իրավունքների մասին բիլլը սկիզբ դրեց խորհրդարանի դերի մասին ժամանակակից պատկերացումներին և առաջ քաշեց օրենքի գերակայության սկզբունքը:

Անգլիայում 1701թ. ընդունված մեկ այլ ակտ սահմանեց օրենսդրության ոլորտում խորհրդարանի գերակայությունը, դատավորների անփոխարինելիության սկզբունքը, արգելեց թագավորական նախարարներին լինել խորհրդարանի անդամներ:

Հանրաճանաչ պատմաիրավական փաստաթղթերում արտացոլված ազատության իդեալների և մարդու իրավունքների հետագա զարգացումը տեղի ունեցավ ԱՄՆ-ում, որտեղ 1776թ. ընդունվեց Վիրջինիայի իրավունքների հռչակագիրը: Վերջինս հռչակեց, որ բոլոր մարդիկ իրենց էությանմբ հավասարապես ազատ և անկախ են և օժտված են որոշակի բնական իրավունքներով:

Հաջորդ իրավաբաղաքական փաստաթուղթը, որը նշանակալից ազդեցություն է ունեցել մարդու իրավունքների բովանդակության զարգացման վրա, նույն թվականի ԱՄՆ-ի Անկախության մասին հռչակագիրն է, որը սահմանեց ճնշվող ժողովրդի ապստամբության իրավունքը:

Եվ, վերջապես, անհրաժեշտ է նշել Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը» (1789թ.), որն այսօր էլ այդ պետության գործող Սահմանադրության (1958թ.) անբաժան մասն է: Հռչակագիրը խարազանում է հին, ավատատի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րական կարգերը և հռչակում «Մարդու բնական, անբաժան և սրբազան իրավունքները»:

Նշված երկրների կողքին անհրաժեշտ ենք համարում նշել նաև հայ ժողովրդի անցած ճանապարհին ու փորձը մարդու իրավունքների կայացման, զարգացման ու ապահովման բնագավառներում: Մարդու իրավունքների կայացման պատմական երկարատև զարգացման փուլում հայ ժողովուրդը ձեռք է բերել ինքնատիպ փորձ: Առավել հատկանշական է այն, որ Հայաստանում բավականին կարճատև ժամանակահատվածում ստեղծվել են երեք հանրապետություն և ընդունվել չորս Սահմանադրություն: Յուրաքանչյուր նոր Սահմանադրություն բովանդակում էր մարդու իրավունքներ՝ կախված երկրում գործող պատմական իրավիճակից, հասարակության պահանջներից և հարցումներից, տարբեր սոցիալական խմբերի հետաքրքրություններից և այլն:

Ընդգծենք հետևյալը. հայոց իրավական փաստաթղթերում, հատկապես Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» ուղղակի կամ անուղղակի ձևով խոսվում է մարդու իրավունքների ու ազատությունների իրավական, օրենսդրական կարգավորման մասին:

Մարդու բնական իրավունքի, ազատության, հասարակական դաշինքի հիմնախնդիրներին հատուկ ուշադրություն են հատկացրել 18-րդ դարի հայ լուսավորիչներ Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը: Հիմնախնդիրը առավել հիմնարար ու ընդգրկուն լուսաբանումների է արժանացել 19-րդ դարի հասարակական, փիլիսոփայական մտքի նշանավոր ներկայացուցիչներ Միքայել Նալբանդյանի, Բաֆֆու, Գրիգոր Արծրունու և ուրիշների կողմից:

1922 թվականի փետրվարի 3-ին ընդունված Հայկական ԽՍՀ առաջին Սահմանադրությամբ ճանաչվում էին բոլորի հավասար իրավունքները՝ անկախ ռասայական և ազգային պատկանելիությունից:

1937 թվականի մարտի 23-ին Հայաստանի Խորհուրդների IX արտահերթ նիստն ընդունեց նոր Սահմանադրություն, համաձայն որի՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունն առանձնացավ լուծարվող Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունից և ներառվեց ԽՍՀՄ կազմում: ԽՍՀՄ նոր սահմանադրությունը հռչակեց սոցիա-

լիզմի հաղթանակը՝ որպես երկրի կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների հանրագումար և ամրագրեց Հայաստանի սոցիալիստական պետության կայացումը:

1978 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀԽՍՀ երրորդ Սահմանադրությամբ հռչակվեցին կոմունիստական գաղափարախոսություններ, որի նպատակն էր կոմունիստական հասարակության ձևավորումն առանց դասային խտրականության: Ամեն դեպքում այն ներառում էր նաև դեմոկրատական նորմեր:

Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում որակական փոփոխություններ կատարվեցին 1990 թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի անկախության հռչակագրի» և 1995 թվականի հուլիսի 5-ի ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո: Սահմանադրությունն արտացոլում էր մարդու իրավունքների, հասարակության և պետության զարգացման ամբողջովին նոր փուլ, սահմանում էր Հայաստանի՝ որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի կարգավիճակը: Սահմանադրությունը փաստացիորեն խճողված է մարդու իրավունքների գաղափարներով, իրատեսական է, ազատ է պատրանքներից և համապատասխանում է միջազգային չափանիշներին և համընդհանուր ճանաչում ստացած պահանջներին:

Այսօր ՀՀ-ն ԱՊՀ միջպետական կառույցների մեծամասնության անդամ է, 1992 թվականի մարտին ՀՀ պետական դրոշը բարձրացվել էր Նյու-Յորքում՝ ՄԱԿ-ի Քարտուղարության շենքի առջև, ՀՀ-ն ընդունվել է մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպությունների շարքերում, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ԵԱՀԿ-ն և բազմաթիվ այլ կառույցներ: 2001 թվականին ՀՀ-ն մտել է Եվրոպայի խորհուրդ, ընդունել բազմաթիվ կոնվենցիաներ և միջազգային պայմանագրեր, որոնցում ամրագրված են մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող բացարձակ կարևոր հայեցակարգեր:

Բնականաբար անցումային փուլը չէր կարող գերծ մնալ սխալներից և բացթողումներից, որոնք հիմնականում պայմանավորված են եղել քաղաքական ճգնաժամերով, ժառանգած սովետական մեխանիզմներով ու աշխարհայացքով, հայ հասարակության էթնոմշակութային առանձնահատկություններով, ինչպես նաև այնպիսի փաստերով, ինչպիսիք են Դարաբաղյան կոնֆլիկտը, տնտեսական շրջափակումը և այլն:

www.journal.lawinsstitute.am

Այդուհանդերձ, անցած 20 տարիների ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության առումով կատարված աշխատանքների արդյունքը շոշափելի է, և կան ձեռքբե-

րումներ, չնայած ընդհանուր առմամբ զարգացման տեմպը հետ է մնում համաշխարհային զարգացման տեմպից:

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն:
2. «Մարդու իրավունքների պաշտպանության և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիա
3. ՀՀ Սահմանադրություն:
4. Խաչատրյան Գ.Մ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, «Հայաստանի Հանրապետություն», Երևան 1999թ.:
5. Բոյցովա Վ.Վ. Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ծառայություն, Համաշխարհային փորձ, Մոսկվա, 1996թ.:
6. Հարությունյան Գ.Գ. «Իրավունք և երաշխիքներ», Երևան, 1999թ.:
7. Կորկունով Ն.Մ. Իրավունքի տեսության ընդհանուր դասեր, Մոսկվա, 1994թ.:
8. Սարգսյան Ս. Հումանիզմի փիլիսոփայություն, Երևան, 2012թ.:
9. Սարգսյան Ս. Մարդու հիմնախնդիրը 19-րդ դարի հայ փիլիսոփայական և հասարակական մտքում, Երևան 2001թ.:
10. Альваро Хиль-Роблес, Парламентский контроль за администрацией (институт омбудсмана).
11. Ombudsman, Parliamentary Commissioners, Mediators and Person discharging semiliar functions in member states of the Council of Europe, A Comparative Study.-Strasbourg: Council of Europe, 1997.
12. J.Stacey, A Frank.Ombudsman compared.Oxford: Clarendon Press 1978.
13. Ed.Gaiden, E. Geraif, International handbook of the Ombudsmen.Westpoint, Conn.: Greenwood Press. 1983.

Ангелина Аванесян

Начальник отдела исков и правовых актов юридического
управления аппарата Управления по управлению государственным
имуществом при правительстве РАСоискатель кафедры конституционного и муниципального права института
политологии и права Российско-Армянского (Славянского) Университета

РЕЗЮМЕ

Происхождение и развитие идеи прав человека

Концепция прав человека в ее современном виде оформилась после второй мировой войны. Принятие международно-правовых актов о правах человека, образование международных организаций, осуществляющих контроль за выполнением государствами взятых на себя в этой области обязательств, развитие национальных систем защиты прав и свобод человека и гражданина явились одним из величайших завоеваний XX столетия.

В долгом историческом развитии становления прав человека армянский народ в этой сфере обрел своеобразный опыт. За достаточно короткий срок он пережил три республики и принял четыре конституции. Каждая новая конституция отражала права человека в зависимости от существующей в стране исторической ситуации, требований и запросов общества, интересов различных социальных групп и т.д.

Естественно, переходный период не мог обойтись без ошибок и пробелов, которые в основном были обусловлены политическими кризисами, инерцией унаследованных советских механизмов и мировоззрения, этнокультурными особенностями армянского общества, а также такими факторами, как карабахский конфликт, экономическая блокада и т.д.

Однако в целом за минувшее пятнадцатилетие в области свободной реализации прав человека имели существенные сдвиги и приобретения, хотя в целом прогресс здесь отстает от общих темпов мирового развития.

Ключевые слова: права человека, гуманизм, верховенство закона, справедливое судебное разбирательство, Magna Carta, Билль о правах, Декларация прав человека.

Angelina Avanesyan

Department of State Property Management by the Government
of the RA as the Head of Division in Juridicial DepartmentPost-graduate student of the
Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

The origin of the idea of human rights and development

The concept of human rights in its present form formed after World War Second. In a long historical development of human rights formation Armenian people has gained a unique experience in this formation. In a relatively short period Armenian people formed three republics and adopted four constitutions.

An each new constitution reflected the rights of human depending of the country's historical situation, requirements and demands of society and the interests of different social groups. Certainly transitional period couldn't be pass without mistakes and gaps which were mainly gave reasons for political crisis and inertia of Soviet legacy mechanisms and ideology, Armenian society's ethnic and cultural features, as well as factors such as Karabakh conflict, economic blockade, etc.

However, over the past fifteen years in the field of free enjoyment of human rights had significant changes and acquisitions although overall progress is lagging behind the pace of global development.

Keywords: Human rights, humanism, rule of law, a fair trial, Magna Carta, The Bill of rights, Declaration of Human Rights.